Արձանագրություն 3

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՇՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 04.02.2019թ. ժամը 17:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Կ. Թովմասյան – ՀՀ ՖՆ պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչության դրամաշնորհների, դրամայնեցման, ծրագրային վարկերի և մուրհակների բաժնի պետ-վարչության պետի տեղակալ,

Անդամներ

Ն. Կարապետյան – ՀՀ ՖՆ պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչության դրամաշնորհների, դրամայնեցման, ծրագրային վարկերի և մուրհակների բաժնի գլխավոր մասնագետ,

Ա. Մարտիրոսյան – ՀՀ ՖՆ գործերի կառավարման վարչության վարչատնտեսական բաժնի պետ,

Հ. Ղազարյան - ՀՀ ՖՆ գործերի կառավարման վարչության վարչատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ,

Գնումները համակարգող

Ա. Աղաբաբյան - ՀՀ ՖՆ գործերի կառավարման վարչության գնումների գործընթացի կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ

1. **<u>Տեղեկություններ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե կատարված հարցման և որակավորման փաստաթղթերի վերաբերյալ</u>**

1. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի եզրակացության համաձայն՝ «Լորենի» հրատարակչատուն ՍՊԸ-ի կողմից ներկայացված տվյալները չեն համապատասխանել իրականությանը՝ մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի իր ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը գերազանցող ժամկետանց պարտավորություններ՝ մասնակիցը ներկայացրել է 252000 ՀՀ դրամի գնային առաջարկ, միևնույն ժամանակ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ 12000 ՀՀ դրամի չափով):

Հանձնաժողովը որոշեց.

1. «Լորենի» հրատարակչատուն ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ – 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Կ. Թովմասյան

հանձնաժողովի անդամներ՝ _____ Ն. Կարապետյան

_____ Ա. Մարտիրոսյան

_____ Հ. Ղազարյան

Գնումները համակարգող ՝ _____ Ա. Աղաբաբյան